

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

17.08. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Վ.Ղարսայանը, Ժ.Ղազարյանը, Դ.Ստեփանյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Մ.Սարգսյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Ուսումնասիրել և վերլուծել սեփական եկամուտների հավաքագրման տարբեր տոկոսներ ունեցող համայնքների ցուցանիշները և վերահսկել հավաքագրման ընթացքը:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին, մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին՝

Հայտնաբերված ապօրինի շինությունների յուրաքանչյուր դեպքի առթիվ կատարել մանրամասն ուսումնասիրություններ և կոնկրետ առաջարկություններ ներկայացնել՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հարցի լուծման նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

ա/ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն ու առաջարկություններ մարզպետի թիվ 17 արձանագրության 1-ին կետով տրված հանձնարարականի՝ «Մորգանի թանգարանի» վերաբերյալ.

բ/ Ներկայացնել առաջարկություններ հյուրանոցային բիզնեսով զբաղվող տնտեսվարողների հետ անհատական շփումների կամ դասընթացների ու սեմինարների կազմակերպման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն ու առաջարկություններ սպանդանոցների գործունեության վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

ա/ Ուսումնասիրել հայտարարված սուբվենցիոն և շինարարական աշխատանքների մրցույթները և ներկայացնել տեղեկատվություն դրանց ընթացքի վերաբերյալ.

բ/ Ներկայացնել պարզաբանում ֆինանսների նախարարի՝ գնումների կազմակերպման վերաբերյալ գրության վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ